ե. կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացվում է գրավոր՝ կենտրոնի պետի կողմից, որում ներառվում են Պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը, բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան, կենտրոնի կողմից արձանագրված խախտման առարկան և պահանջը, ահազանգող անձի պահանջը (եթե նման պահանջ առկա է), բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները, այլ անհրաժեշտ տեղեկություններ.

6) կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքը քննվում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով:

12.2. Գնումների, այդ թվում բողոքարկումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

12.3. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու Պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին՝ դիմում ներկայացնելով՝ <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ին աշխատանքային օրերին և ժամերին, ք. Երևան, Կոմիտասի 54/բ, 115 սենյակ հասցեով,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, Պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները:

12.4. Խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անունը (անվանումը) և հասցեն.

2) Պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը, ընդ որում՝ բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար դրամ, որը պետք է փոխանցվի <<Հայ Էկոնոմբանկի Արաբկիրի>> մ/ճ, Հ/Հ 163058100971 <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հաշվեհամարին: Լիազորմարմնի և գնումների աջակցման կենտրոնի կողմից գնումների բողոքարկման խորհրդում բողոքարկման գործընթաց նախաձեռնվելու դեպքում բողոքարկման համար վճար չի կատարվում.

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

12.5. Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագրի կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն սույն մասի 8.9 կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

12.6. Եթե բողոքը չի բավարարում Օրենքի 48-րդ հոդվածի պահանջներին, ապա գնումների աջակցման կենտրոնը խորհրդի անունից այդ մասին տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու հնգօրյա ժամկետ:

12.7. Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, Պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա գտնվելու խորհրդի նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

12.7.1. Բողոքի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներում գնումների բողոքարկման խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ներկայացուցիչը:

12.8. Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան քսան օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

12.9. Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ Պատվիրատուի, հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելու և ուղղված միջոցներ.

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում Պատվիրատուի կամ հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ սույն մասի 8.9 կետով

նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3) չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը՝

ա. եթե Պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց Օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. Օրենքի 9-րդ հոդվածի կամ սույն մասի 12.17 կետի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը գրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա:

4) եթե, սույն մասի 12.6 կետի պահանջներին հակառակ, հանձնաժողովը բոլոր համապատասխան փաստերը քննելուց հետո գտնում է, որ ընդհանուր գերակա շահերը պահանջում են ուժի մեջ թողնել պայմանագիրը, ապա կիրառում է այլ ընտրանքային պատժամիջոցներ՝

ա. պայմանագրի կատարման սահմանափակումը՝ դրա կատարման ժամկետը կրճատելու միջոցով, և (կամ)

բ. Պատվիրատուի հանդեպ պայմանագրի գնի առավելագույնը 10 տոկոսի չափով տուժանքի կիրառում:

5) բոլոր այն դեպքերում, երբ սույն մասի 3-րդ ենթակետով նախատեսված չեղյալ հայտարարելու պատժամիջոցը չի կարող ունենալ հետադարձ ուժ (քանի որ անհնար է վերացնել կատարված պայմանագրային պարտավորությունները), հանձնաժողովը, ի հավելումն, կիրառում է սույն մասի կետի 4-րդ ենթակետի «ա» մասով նախատեսված պատժամիջոցը:

6) հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխատուցման հայցի համար:

7) որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

12.10 Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքը բավարարվելու դեպքում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

12.11 Բողոքի բանավոր քննությունը բաց է հանրության համար և բողոքը ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

12.12 Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդը ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 48-րդ հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը գրկվում է գնումների բողոքարկման խորհուրդի համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

12.13 Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն այն կայացնելու օրվանից՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, հրապարակվում է տեղեկագրում և ուղարկվում է Պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին:

12.14 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել Պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կատարած խախտման հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխատուցում:

12.15 Խորհուրդը կայացնում է բողոքը ներկայացրած անձի պահանջած ժամանակավոր միջոցը կիրառելու մասին որոշում, եթե նման միջոցը պաշտոն և անհրաժեշտ է ակնկալվող վնասը մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը կանխելու համար:

12.16 Խորհուրդը հաշվի է առնում ժամանակավոր միջոցի հնարավոր հետևանքները բոլոր այն շահերի, այդ թվում՝ հանրային շահի համար, որոնք կրելու են վնասներ, և կարող է կայացնել նման միջոց չկիրառելու մասին որոշում, եթե դրա բացասական հետևանքները կարող են գերազանցել օգուտը: Ժամանակավոր միջոց չկիրառելու մասին որոշումը չի կարող ազդել նման միջոցի դիմած անձի որևէ այլ հայցի վրա:

12.17 Բողոքը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն հրավերի 12.15-րդ կամ 12.16-րդ կետերով նախատեսված որոշման ընդունումը Պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու:

ՄԱՍ II

Հ Ր Ա Յ Ա Ն Գ

ՊԱՐԶԵՑԿԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին հայ տղ պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայ տերը (ներառվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ սույն հրահանգի 3.2 կետում նշված դեպքերի) պետք է կազմված լինեն հայերեն:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել հայտ:

Հայտը սույն հրավերով նախատեսված կարգով սույն ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված գնման առարկայի վերաբերյալ առաջարկն է, որը ներկայացվում է ընթացակարգին մասնակցելու դիմումով՝ (Հավելված 1), որում պարտադիր է նշել Մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը, Էլեկտրոնային փոստի հասցեն: Ընդ որում Մասնակիցը դիմումին կից ներկայացնում է նաև սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ների) պատճենը¹⁶:

2.2 Մասնակիցները հայտով ներկայացնում են՝

2.2.1 <<Մասնակցության իրավունքը>> չափանիշի՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունն իր իսկ կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված այն մասին, որ Մասնակիցը՝

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) ներառված չի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) չունի գերիշխող դիրքի չարաչափում և հակամրցակցային համաձայնություն:

Նշված հայտարարության առաջարկվող ձևը և դրա նկատմամբ առաջադրվող պահանջները ներկայացված են սույն հրավերի N2 հավելվածում:

Եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է սույն կետով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին: Բացի հայտարարությունից, սույն կետով նախատեսված պահանջների

¹⁶ Եթե հրավերով լիցենզիայի պահանջ չի սահմանվում, ապա սույն նախադասությունը հրավերից հանվում է:

հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապացուցվել է Մասնակցի՝ գնումների գործընթացում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաչափական դրսևորման փաստը, ապա տվյալ Մասնակցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.2.2 Հայ տարարությունն՝ մասնագիտական փորձառության մասին

1) (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, այդ դեպքում Մասնակցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող¹⁷:

3) Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են սույն հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները հետևյալն են՝ հաշվի առնելով սույն հրավերով նախատեսված քաղաքացիության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը:

սահմանել սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության

Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքացիության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը:

Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Մասնակցի:

2.2.4 Հայ տարարությունն (Հավելված N 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայությունն, այդ դեպքում Մասնակցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2.2.5 Հայ տարարությունն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությունն մասին.

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակցն իր հայտով ներկայացնում է հայ տարարությունն (Հավելված 3.4) այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելու նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Այդ դեպքում Մասնակցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2) Եթե Մասնակցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակցը ֆիզիկական անձ է, ապա Մասնակցը հայտով ներկայացնում է հայ տարարությունն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությունն, այդ դեպքում Մասնակցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող¹⁸:

2.2.6 Հայ տարարությունն (Հավելված N 3.6) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայությունն, այդ դեպքում Մասնակցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2.2.7 գնային առաջարկ, որը ներկայացվում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում (Հավելված N 4),

2.2.8 հայտի ապահովում՝ տուժանքի ձևով (Հավելված N 9):

¹⁷ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախաառվային գիծը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

¹⁸ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախաառվային գիծը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերը հրավերից հանվում են:

2.2.9 գործակալ ունեցան կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրը իրականացվելու է գործակալ ունեցան միջոցով:

2.2.10 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)¹⁹:

3. ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԶԲԱՆԵՑՐԱՃ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՅԿՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

3.1 Սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է

ա) նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը, ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնաժողովում կողմի գրավոր հավաստումը)²⁰:

բ) այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք Մասնակիցը նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ (Հավելված N 5.1): Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները²¹:

գ) տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին (Հավելված N 5.2): Նշված տեղեկանքին անհրաժեշտ է կցել հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները²²:

3.2 Հայտում ներառվող՝ դիպլոմների պատճենները, տրանսպորտային միջոցների, տեխնիկական միջոցների, սարքերի, սարքավորումների վերաբերյալ փաստաթղթերը, որոնք տրամադրվել են խորհրդային ժամանակաշրջանում կամ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից, կարող են կազմված լինել ռուսերեն լեզվով, եթե դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժողովրդագրած չեն ճանաչվել (համարվել):

3.3 Հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից:

3.4 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նույնպիսի կարգով վավերացված օրինակները:

¹⁹ Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ Մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության:

²⁰ Եթե գնման առարկայի նմանատիպի նախաաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

²¹ Եթե գնման առարկայի նմանատիպի նախաաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ, ապա սույն կետը հրավերից հանվում է:

²² Եթե գնման առարկայի նմանատիպի նախաաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ, ապա սույն կետը հրավերից հանվում է:

4. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

4.1 Առաջարկվող գինը աշխատանքների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

4.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվել իբրև գումարի չափը: Ընդ որում՝

ա. Մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

բ. շինարարական ծրագրերի գնման դեպքում Մասնակիցը չի ներկայացնում իր կողմից կազմված ծավալ աթերթ-նախահաշիվ, իսկ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում կնքվող պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $VQS = UG/LQ \times DQS$, որտեղ՝

UG-ն ընտրված մասնակցի առաջարկած գինն է.

LG-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

DQS-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

VQS - ծավալ աթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է²³.

4.3 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով²⁴:

5. ՀԱՅՏԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտը փաստաթղթային ձևով ներկայացնելու դեպքում Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը, ինչպես նաև սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը /տեղեկությունները/, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են <<բնօրինակ>> և <<պատճեն>> բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

5.2 Սույն հրահանգի 5.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմվելու լեզվով նշվում են՝

ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) պարզեցված ընթացակարգի ծածկագիրը.

գ) <<չ բացել մինչև հայտերի բացման նիստը>> բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

5.3 Սույն հրահանգի 5.1 և 5.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

²³ Շինարարական ծրագրերի չհանդիսացող գնումների դեպքում սույն կետը հանվում է հրավերից:

²⁴ Սույն կետը սահմանվում է հրավերով, եթե պայմանագրի գինը կայուն է:

Դ Ի Մ ՈՒ Մ
ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

_____ հայտնում է, որ ցանկություներում ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<Բալ ահովտի Ի. Վիրաբյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ *-ի կողմից <<ԲԻՎԴ-
ՊԸԱՇՁԲ-16/1>>* ծածկագրով հայտարարված պարզեցված ընթացակարգի

..... չափաբաժնիներ և հրավերի պահանջներին
չափաբաժնի համարը

համապատասխան ներկայացնում է հայտը և համաձայն է սույն հրավերի 7.5 կետի
1-ին ենթակետով նախատեսված հարցումը և դրա հետ կապված՝ գնումների մասին ՀՀ
օրենսդրությամբ նախատեսված գործողություներն իրականացնելու համար:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ.
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

1. իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին
պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա
մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

- 1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
- 2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության
դեպքերի.

2. հանդիսանում է ռեզիդենտ:
Երկրի անվանումը

_____ -ը հայտնում է, որ ունի <<ԲԻՎԴ-ՊԸԱՇՁԲ-16/1>>* ծածկագրով
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հայտարարված պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված լիցենզիա/ներ/
/պատճենը կցվում է²⁵:

_____ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ <<Մասնակցի հարկ վճարողի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հաշվառման համար >>:

_____ -ի ԷԼ ԵԿՏՐՈՆային փոստի հասցեն է՝ <<Մասնակցի ԷԼ ԵԿՏՐՈՆային փոստի հասցե>>:
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____ Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի) պաշտոնը, _____ Անուն Ազգանունը
(ստորագրությունը)

Կ. Տ.

²⁵ Եթե հրավերով լիցենզիայի պահանջ չի սահմանվում, ապա սույն նախադասությունը դիմումից հանվում է:

*Նախապես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՊԱՅԱՆՋՆԵՐԻՆ ԻՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

_____ -ն հայտնում և հավաստում է, որ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<ԲԻՎԴ-ՊԸԱՇՁԲ-16/1>>* ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտը
ներկայացնելու օրվա դրությամբ.

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության
հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) <<_____>>-ի գործադիր մարմնի ներկայացուցիչը
հայտը
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում
դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական
ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ
այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով
հանված կամ մարված է,

4) <<_____>>-ն ներառված չի գնումների
գործընթացին
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) բացակայում է գերիշխող դիրքի չարաչափում և հակամրցակցային
համաձայնություն,

(ստորագրողի անվանումը) (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

Կ. Տ.

*Նախապես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:

<<ԲԻՎԴ-ՊԸԱԾՁԲ-16/1>>* ծածկագրով

պարզեցված ընթացակարգի հրավերի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒ ԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույնով _____-ն հայտնում և հավաստում է, որ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<ԲԻՎԴ-ՊԸԱԾՁԲ-16/1>>* ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտը
 ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների

ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է _____որի
 ընդհանուր

(համանման (նմանատիպ) պայմանագրի (երի) անվանումը (ներքո))

արժեքը կազմել է _____ ՀՀ դրամ, և պարտավորվում է նշված
 ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված կարգով
 ներկայացնել սույն հայտարարությանը հիմնավորող՝ հրավերով
 նախատեսված փաստաթղթերը:

*Ընդ որում դրա(դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ
 հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման
 ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն
 տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների
 ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման ընթացակարգի
 շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:*

_____Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, _____Անուն Ազգանունը)
(ստորագրողի ունը)

Կ. Տ.

²⁶ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախաաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի
 համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն հավելվածը հրավերից
 հանվում է:

*Նախապես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Մ Ի Ջ Ո Ց Ն Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն

Սույնով _____-ն <<ԲԻՎԴ-ՊԸԱՇՁԲ-16/1>>*
ծածկագրով

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

պարզեցված ընթացակարգի շրջանակներում հայտնում և հավաստում է,
որ կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման
համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և այդ տեխնիկական
միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով
նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

_____ն պարտավորվում է նշված ծածկագրով պարզեցված
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն
հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը²⁷:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրությունը)

Կ. Տ.

²⁷ Սույն նախադասությունը հրավերից հանվում է, եթե գնման առարկայի նմանատիպի նախադասվային
գինը գնումների պլանի ընթացակարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի
հնգապատիկը, կամ եթե <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում
համապատասխան պահանջներ:

*Նախապես ըրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Սույնով _____-ն հայտնում և հավաստում է,
որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<ԲԻՎԴ-ՊԸԱԾՁԲ-16/1>>* ծածկագրով պարզեցված ընթացակարգի
հայտը ներկայացնելու նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը
պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների
հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային
արժեքը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրությունը)

Կ. Տ.

²⁸ Եթե գնման առարկայի նմանադրյալի նախահաշվային գինը գնումների պլանի ընթացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն հավելվածը հրավերից հանվում է և հրավերով մասնակիցներից պահանջվում է ներկայացնել միայն 3.5 հավելվածը՝ վերջինից հանելով
բացատրությունը (footnote):

*Նախապես ընթացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:

<<ԲԻՎԴ-ՊԸԱՇՁԲ-16/1>>* ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով _____-ն <<ԲԻՎԴ-ՊԸԱՇՁԲ-16/1>>* ծածկագրով
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

պարզեցված ընթացակարգի շրջանակներում հայտնում և հավաստում է,
որ կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման
համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և այդ ֆինանսական
միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով
նախատեսված պարտավորությունների պաշտոնական կատարումը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրությունը)

Կ. Տ.

²⁹ Եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը ֆիզիկական
անձ է, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է սույն հավելվածը,

*Նախապես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով _____-ն <<ԲԻՎԴ-ՊԸԱՇՁԲ-16/1>>* ծածկագրով
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

սպորզեցված ընթացակարգի շրջանակներում հայտարարում և հավաստում է, որ կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աջխատանքային ռեսուրսներ և այդ աջխատանքային ռեսուրսներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

-----**ն պարտավորվում է նշված ծածկագրով սպորզեցված**
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն
հայտարարությամբ հիմնավորող՝ հրավերով նախատեսված
փաստաթղթերը³⁰:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրությունը)

Կ. Տ.

³⁰ Սույն նախադասությունը հրավերից հանվում է, եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե <<Աջխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ:

*Նախապես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:

Գ Ն Ի Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսու մնասիրելով Ձեր կողմից տրամադրված <<ԲԻՎԴ-ՊԸԱՇՁԲ-16/1>>* ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,
_____ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)					
Չափաբաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տաեքով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>				
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>				
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>				
...	...				
...	...				

***Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:**

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրողի ունը)

Կ. Տ.

*Նախապես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:

Հավելված 5
<<ԲԻՎԴ-ՊԸԱՇՁԲ-16/1>>* ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

Կից Ձեզ եմ ներկայացնում _____-ի՝ <<ԲԻՎԴ-ՊԸԱՇՁԲ-16/1>>*
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հրավերով
նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը
հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը³¹:

_____	_____	_____	_____	_____	_____	_____
(ստորագրությունը)	Մասնակցի	անվանումը	(անունը)	(ղեկավարի	պաշտոնը,	Անուն
						Ազգանունը)

Կ. Տ.

³¹ Եթե գնման առարկայի նմանատիպի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն
չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն հավելվածը հրավերից հանվում է:

*Նախապես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:

<<ԲԻՎԴ-ՊԸԱՇՁԲ-16/1>>* ծածկագրով
պարզեցված ընթացակարգի հրավերի

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ (ՍԱՐՔԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒ ՄԼԵՐԻ) ՄԱՍԻՆ

N ը/ կ	Տեխնիկական միջոցի (սարքի, սարքավորման տեսակը)	Տեխնիկական միջոցի (սարքի, սարքավորման) մակնիշը, պետիամարանիշը (եթե առկա է) և արտադրողի ան տարբերիչը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը

- <<ԲԻՎԴ-ՊԸԱՇՁԲ-16/1>>* ծածկագրով պարզեցված ընթացակարգի
շրջանակներում կից ներկայացնում ենք տեխնիկական միջոցների
տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ Մասնակցի
սեփականությանը կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հավաստող
փաստաթղթերի պատճենները:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրողի անունը)

Կ. Տ.

³² Եթե գնման առարկայի նմանատիպի միջոցների գինը գնումների պլանի ընթացման կարգի համաձայն
չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե <<Տեխնիկական միջոցներ>>
որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ, ապա սույն հավելվածը
հրավերից հանվում է:

*Նախապես ընթացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:

*

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ԿՆՔԿԵԼ ԻՔ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

N	Հիմնական աշխատակազմում մեղքերով մասնագետների				
	Անունը, Ազգանունը	Որակավորումը	Աշխատանքային փորձը		Գործատուի անվանումը
			Ժամանակահատվածը	Գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5	6
1					
2					
3					
..					
..					

<<ԲԻՎԴ-ՊԸԱՇՁԲ-16/1>>* ծածկագրով սարգեցված ընթացակարգի շրջանակներում կից ներկայացնում եմ _____

(հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:)

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անունը Ազգանունը)
 (ստորագրությունը)

Կ. Տ.

³³ Եթե գնման առարկայի նմանատիպի նախաաշվային գինը գնումների պլանի ընթացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշի մասով չեն սահմանվում համապատասխան պահանջներ, ապա սույն հավելվածը հրավերից հանվում է:

*Նախապես ընթացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԲԻՎԴ-ՊԸԱՇՁԲ-16/1 >>**

Գ.Բալ ակտիվիտ

<< >> <<

>> 20 թ.

<<Բալ ակտիվիտի Ի. Վիրաբյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն՝ Թ.Խաչատրյանի, որը գործում է <<Բալ ակտիվիտի Ի. Վիրաբյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և << >> ----ն, ի դեմս Ընկերության տնօրեն -----ի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալ առու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալ առուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալ աթերթ-նախահաշվով նախատեսված <<ՀՀ Կոտայքի մարզի Բալ ակտիվիտի Ի. Վիրաբյանի անվան միջն. Դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքի սանհանգույցների վերանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալ աթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ <<60 օրացուցային օր>>:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալ առուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալ առուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալ առուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալ առուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալ առուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված

փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալ առուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալ առուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է անհայտանհնար,

բ) Կապալ առուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալ առուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալ առուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալ առուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալ առուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալ առուի մասնակցությամբ գննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալ առուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալ առուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալ առուին վճարել վերջինիս վճարման ենթակագումարները:

3.3. Կապալ առուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակագումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակագումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալ առուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով,

գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալ արժեքին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությանը կոնսերվացնելու անհրաժեշտությանից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1 տարի (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1 տարի³⁴:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրամասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի

³⁴ Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:

արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալ առուև Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուին՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

2) Կապալ առուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալ առուև պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուին հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից յոթօրյա ժամկետում Կապալ առուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուին սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուին Կապալ առուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալ առուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալ առուին:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ----- (-----) ՀՀ դրամ, որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալ առուին իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուին նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պաշտոնադր կատարման պայմաններում կողմերի (Կապալ առու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուին վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի

Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալ առուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան սույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ԼԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է³⁵.

ԼԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալ աթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալ առուն պատասխանատվությունն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալ առուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալ առուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալ առուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվությունն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:
